ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՍՆԳՐՅԱՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Դիանա Ռոբերտի Գալոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Դավիթ Ներսիկի Հախվերդյան

Տնտեսագիտության թեկնածու,

Նարեկ Ցուրիի Հովականյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2023թ. հունիսի 6-ին ժամը 14.00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ.Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. ապրիլի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Տ. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության գլոբալացման և տնտեսական ազատականացման գործընթացները տեղի են ունենում առանձին տարածաշրջաններում տնտեսական ինտեգրման գործընթացներին զուգահեռ: Առևտրի և սակագների գլխավոր համաձայնագիրը զարկ տվեց համաշխարհային տնտեսությունում բաց տիպի տնտեսությունների ձևավորմանը, զարգացող երկրների համար հավասար պայմանների և հնարավորությունների ստեղծմանը: Զարգացող երկրները շահեցին կանոնների, առևտրային խտրականության երաշխիքների, շուկա երաշխավորված մուտքի և այլ սկզբունքների վրա հիմնված առևտրային համակարգի առավելություններից:

Տնտեսությունների բացության և ազատականացման գործընթացներն ուղեկցվում են զարգացող երկրների միջև փոխգործակցության աճով, ընդ որում, վերափոխվում են փոխկապվածության և փոխազդեցության թե՛ քանակական, թե՛ որակական ցուցանիշները: ՀՀ տնտեսությունն իր վրա մեծապես կրում է ընթացող գործընթացների ազդեցությունը՝ ձևավորելով բաց տնտեսություն ու ենթարկվելով արտաքին և ներքին տատանումների՝ միաժամանակ դառնալով առավել դինամիկ, վերափոխվող ու «զգայուն»: Համաշխարհային տնտեսությունում ընթացող տարաբնույթ գործընթացները փաստում են ազգային տնտեսությունների ռացիոնալ բացության անհրաժեշտության մասին:

Տնտեսության բացությունը ամրապնդում է երկրների միջև տնտեսական կապերը, նպաստում է ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնմանը, արտահանման և ներմուծման կառուցվածքի փոփոխությանը, տեղեկատվության, փորձի փոխանակման ինտենսիվացմանը և այլն: Առանձին երկրների կողմից վարվող բացության քաղաքականության վրա ազդում են ռեսուրսներով ապահովվածությունը, ներքին շուկայի չափերը, արտաքին տնտեսական կապերի բնույթը, ինստիտուտները և պետության կողմից իրականացվող քաղաքականության առանձնահատկությունները: Առևտրային բացության օգուտները պահելու համար երկրները պետք է շարունակեն խորացնել առևտրային կապերը, վերացնեն ապրանքների և ծառայությունների առևտրին խոչընդոտող սահմանափակումները, քանի որ օգուտները առևտրի խոչընդոտների համակարգված կրճատումից կարող են ավելի մեծ լինել, քան խոչընդոտներով առևտրից:

ԵԱՏՄ շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացները վերափոխում են անդամ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, տնտեսության բացության մակարդակը՝ պայմանավորված ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում ընթացող փոխադարձ ազատականացման և երրորդ երկրների

հետ վարվող առևտրային քաղաքականության փոփոխություններով: ԵԱՏՄ անդամ երկրներում առևտրի և ներդրումների դիվերսֆիկացման ցածր մակարդակը, արտաքին առևտրի ընդհանուր ծավալում փոխադարձ առևտրի ցածր տեսակարար կշիռը, երկրների միջև արդյունաբերական համագործակցության ցածր տեմպերը, անդամ պետությունների արտահանման հումքային և կենտրոնացված կառուցվածքը, անբավարար ներդրումային գրավչությունը և մի շարք այլ գործոններ խոչընդոտում են առկա ինտեգրացիոն ներուժի իրացմանը:

Գործնականում, ինտեգրման շրջանակներում երկրի բացությունն ապահովում է տնտեսական արդյունավետություն առևտրային հոսքերի ազատականացման, համախառն ՀՆԱ-ի աճի, անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման միջոցով: Սակայն պետք է հաշվի առնել, որ առևտրի և ներդրումների ազատականացման համաձայնագրերը տնտեսության, այդ թվում՝ որևէ ճյուղի վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, քանի որ բաց տնտեսությունը ոչ թե տնտեսական աճի երաշխիք է, այլև ապրանքների, ծառայությունների, կապիտալի ազգային շուկաներ մուտք գործելու, առևտրի և ներդրումների զարգացման հնարավորություն: Իսկ ԵԱՏՄ չի սահմանափակվում գործող երկրների շրջանակներով: Մի շարք երկրների կողմից նոր տնտեսական գործընկերություններում մասնակցության քաղաքականությունը, ԵԱՏՄ տարողունակ շուկայի բաց «դռները», ԵԱՏՄ առևտրային նախապատվություններից, ապրանքների և կապիտալի ընդլայնման հնարավորություններից օգտվելու ցանկությունը ուղեկցվում է արտաքին տնտեսական գործունեության ազատականացման մակարդակը որոշելու հիմնախնդրի հետ, ինչն էլ պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը: ԵԱՏՄ անդամ երկրները, այդ թվում՝ Հայաստանը, դառնում են ավելի զգայուն արտաքին տնտեսական միջավայրի նկատմամբ՝ բախվելով բաց տնտեսության ձևավորման բազմաթիվ խնդիրների՝ կապված ազատականացման աստիճանի և այլ երկրների հետ ինտեգրման սխեմաների ընտրության հետ: Սա նշանակում է, որ ԵԱՏՄ հետագա ընդլայնումը կարող է ինչպես հնարավորություններ, այնպես էլ սպառնալիքներ ստեղծել անդամ պետությունների տնտեսական զարգացման համար:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության բացության հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտումն է՝ միջազգային տնտեսական ինտեգրման համատեքստում: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

• ուսումնասիրել մասնագիտական գրականությունում առկա տնտեսական բացության հայեցակարգի հիմնական բնութագրերը,

• դիտարկել տնտեսական ինտեգրումը՝ որպես տնտեսության բացության և տնտեսական արդյունավետության ապահովման գործիք,

• քննարկել բաց տնտեսության շուրջ ազդեցության առկա մոտեցումները միջազգային առևտրի արդյունավետության բարձրացման վրա,

• վերլուծել ՀՀ տնտեսության բացության մակարդակը, միտումները և զարգացման առանձնահատկությունները,

• գնահատել ՀՀ տնտեսության բացության և արտաքին առևտրի ծավալների միջև առկա փոխկապվածությունը,

• բացահայտել ՀՀ տնտեսական բացության և օտարերկրյա ներդրումների ներգրավման միջև առկա հնարավոր կապերը,

• քննարկել ՀՀ տնտեսական բացության դերը արժութաֆինանսական հարաբերությունների կատարելագործման գործում,

• տնտեսաչափական մոդելավորման գործիքակազմի կիրառմամբ գնահատել առևտրի հետագա ազատականացման հետևանքները,

• բացահայտել ՀՀ տնտեսական համագործակցության հիմնախնդիրներն ու հեռանկարները ԵՄ հետ համագործակցության ընդլայնման և ԵԱՏՄ անդամակցության համատեքստում:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության բացությունն է տնտեսական ինտեգրման, այդ թվում ԵԱՏՄ ինտեգրման պայմաններում, իսկ հետազոտության առարկան՝ բացության հիմնախնդրի կարգավորման հիմնախնդիրները և մեխանիզմները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսության բացությունը, ներդրումների և առևտրի ազատականացման գործընթացները լուսաբանող հիմնարար հետազոտությունները, որոնք ներկայացված են դասական և ժամանակակից, հայ և օտարերկրյա գիտնականների և տնտեսագետների աշխատություններում: Տնտեսության բացության, առևտրային, ներդրումային հոսքերի միջոցով ինտեգրման գնահատման հարցերը քննարկվել են Բ.Բալասայի, Կ.Կոդզիմի, Կ.Անդերսոնի, Ջ.Լիպսեյի, Կ.Լանկաստերի, Ջ.Միդեյի, Ռ.Բոլդուինի, Պ.Հոֆմանի, Ն.Վորոնցովայի, Մ.Գլազատովայի, Դ.Գալոյանի, Ա.Մարկոսյանի, Գ.Նազարյանի, Դ.Հախվերդյանի, Հ.Բագրատյանի և այլոց աշխատություններում:

Հետազոտության իրականացման տեղեկատվական հիմք են հանդիսացել միջազգային և տեղական վիճակագրական վերլուծական ակնարկները, այդ թվում՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի, ԵԱՏՄ հանձնաժողովի, Համաշխարհային

բանկի, Intracen-ի և մի շարք այլ կառույցների հաշվետվությունները, ծրագրերը, տեղեկատվական-վերլուծական զեկույցները, գիտավերլուծական և մեթոդական նյութերը, պաշտոնական վիճակագրական տեղեկագրերը և այլն:

Տնտեսության բացության մակարդակի, արտաքին առևտրային, ներդրումային հոսքերի գնահատման համար օգտագործվել են քանակական և որակական մեթոդներ: Բացության հիմնախնդրի համակողմանի քննարկման համար հետազոտության շրջանակներում կիրառվել է GTAP ընդհանուր հավասարակշռության մոդելը, որը ներառում է երկրների սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև մաքսային կարգավորման որոշակի ցուցանիշներ: Կիրառվել է GTAP մոդելային տվյալների բազայի 10-րդ հրատարակությունը՝ օգտագործելով, մի կողմից՝ ԵԱՏՄ պետությունների, մյուս կողմից՝ պոտենցիալ գործընկեր պետությունների սակագնային կարգավորման պարամետրերը: Վերլուծության մեջ մոդելի ճյուղերը զուգավորվել են արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) 6-անիշ ապրանքային անվանումների հետ:

Առևտրի ազատականացման էֆեկտը ճշգրտելու համար ընտրված երկրների համար իրականացվել է մաքսատուրքերի հորիզոնական զրոյացում, որի շնորհիվ հաշվարկվում է հավասարակշռության նոր վիճակ, որը համապատասխանում է մաքսա-սակագնային կարգավորման փոփոխված պարամետրերին: Արդյունքում տեղի է ունենում մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոփոխություն (օրինակ, համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), արտադրության, արտահանման/ներմուծման ծավալներ), որն էլ թույլ է տալիս գնահատել տնտեսության հետագա ազատականացման էֆեկտները: ԵԱՏՄ հետագա ընդլայնման և պոտենցիալ երկրների հետ առևտրի ազատականացման մակրոտնտեսական արդյունքների դիտարկումը թույլ կտա ընտրել բացության հետագա քաղաքականության ճիշտ մոտեցումներ: Կիրառված մեթոդաբանությունը բացահայտում է և հիմնավորում է ԵԱՏՄ ընդլայնման դեպքում պոտենցիալ երկրների ընտրության, մասնակցության նպատակահարմարությունը:

Ատենախոսությունում կիրառվել են նաև ուսումնասիրված նյութերի քննական, համակարգային, համեմատական վերլուծության, ինչպես նաև տվյալների համակարգման, ընդհանրացման և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ արտացոլող հիմնական դրույթներն են.

• միջազգային տնտեսական ինտեգրման շրջանակներում առևտրի բացության գնահատման համար մշակվել և հաշվարկել է նոր ցուցանիշ՝ փոխադարձ առևտրի քվոտա՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն միավորման ներսում փոխադարձ ներմուծման և արտահանման գումարի հարաբերակցություն ՀՆԱ-ին:

• GTAP մոդելավորման կիրառմամբ գնահատվել է երրորդ երկրների հետ առևտրի ազատականացման ազդեցությունը ԵԱՏՄ անդամ երկրների, այդ թվում Հայաստանի, մակրոտնտեսական զարգացման ցուցանիշների վրա՝ հաշվարկելով ՀՆԱ-ի, թողարկման, արտահանման և ներմուծման ծավալների, ինչպես նաև զբաղվածության ցուցանիշների հնարավոր փոփոխությունը:

• GTAP մոդելում ընդգրկված երկրների հետ առևտրի պայմանների փոփոխման, մասնավորապես առևտրի ազատականացման դեպքում (Պակիստան, Մալազիա, Կորեա) վերհանվել են դեպի ԵԱՏՄ ներմուծման նկատմամբ զգայուն ապրանքները:

• ԵԱՏՄ ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում տնտեսության հետագա բացությանն ուղեկցող առևտրի ազատականացման արդյունքում հաշվարկվել է պոտենցիալ առևտրային գործընկերների հետ (Պակիստան, Մալազիա, Կորեա) ԵԱՏՄ անդամ պետություններում ներմուծման ծավալի հարաբերական փոփոխությունը, որի հիման վրա կազմվել են այդ երկրներից ներմուծման նկատմամբ բարձր զգայունությամբ օժտված ապրանքախմբերի մատրիցաները:

• Գնահատվել է, որ պոտենցիալ առևտրային գործընկեր-երկրների հետ առևտրի ազատականացման դեպքում ակնկալվող արտահանման աճը որոշ ապրանքային խմբերի գծով չի համատասխանում երկրի մասնագիտացմանը, միևնույն ժամանակ այդ երկրների միջև առկա ապրանքաշրջանառության ծավալների վրա գնահատվել է մասնագիտացմանը համապատասխանող ապրանքների արտահանման ներուժը:

• Փոխադարձ առևտրային և ներդրումային հոսքերի միջև գծային կախվածության և ներդրումային էլաստիկության հիման վրա գնահատվել է, որ ԵԱՏՄ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա է ուժեղ կապվածություն:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ատենախոսությունում ՀՀ տնտեսության բացության գնահատման արդյունքները, ինչպես նաև հետագա ազատականացման մակարդակը որոշելու համար առաջարկվող լուծումները կարող են օգտակար լինել միջազգային տնտեսական ինտեգրման առևտրային, ներդրումային, արժութային քաղաքականության մշակման համար: Միջազգային տնտեսական ինտեգրման շրջանակներում ՀՀ

տնտեսության բացության մակարդակը, տնտեսական ընդլայնման և առևտրի ազատականացման դեպքում մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդեցության գնահատումը, տնտեսության զգայուն ճյուղերի վերհանումը առանցքային են ԵԱՏՄ ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում տնտեսության ազատականացման մակարդակը որոշելու տեսանկյունից:

Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ տնտեսության բացության, առևտրի ազատականացման հիմնախնդիրները ուսումնասիրող տնտեսագետների, ոլորտին առչնվող պետական կառույցների և այլ շահագրգիռ անձանց համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը: Հետազոտության հիմնական արդյունքները ամփոփվել են ատենախոսության շրջանակներում հրատարակված 4 գիտական հոդվածներում, որոնցից մեկը ներառված Scopus–ում ինդեքսավորված Journal of Liberty and International Affairs ամսագրում: Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 128 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենոխոսության առաջաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, ստացված հիմնական արդյունքներն ու նորույթը, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «***Տնտեսության բացության մակարդակը և դրա կապը միջազգային տնտեսական ինտեգրման հետ»*** գլխում հեղինակը դիտարկել է տնտեսական բացությունը՝ որպես միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման, որն այսօր ընթանում է տնտեսական ինտեգրման պայմաններում: Այս համատեքստում հեղինակը տնտեսական ինտեգրումը դիտարկել է որպես տնտեսության բացության, տնտեսական և միջազգային առևտրի արդյունավետության բարձրացման արդյունավետ գործիք:

Ուսումնասիրելով տնտեսության բացության գնահատման տարբեր մոտեցումները՝ հեղինակը գտնում է, որ չկա միանշանակ պատասխան, թե

արդյո՞ք տնտեսության բացության բարձր մակարդակը հանգեցնում է երկրի տնտեսական զարգացման մակարդակի բարձրացմանը, խթանում է տնտեսական զարգացումը թե ոչ: Ըստ այդմ, հեղինակը կարևորում է տնտեսության բացության խելամիտ մակարդակի սահմանումը, որը պետք է հենվի տնտեսության արդյունավետության բարձրացման, մրցունակության խթանման և ազգային անվտանգության սկզբունքների վրա: Այս գործընթացը միաժամանակ պահանջում է արդյունավետ առևտրային, մաքսային, արժութային, վարկային և ներդրումային քաղաքականությունների իրականացում, որը կարող է կարգավորել երկրի՝ համաշխարհային տնտեսությանը ինտեգրման աստիճանը:

Բացության հիմնախնդիրը որոշակի փոխակերպվում է տնտեսական ինտեգրման պայմաններում: Ինտեգրացիոն գործընթացների զարգացումը, որը պայմանավորված է տարածաշրջանի մակարդակով ազգային տնտեսությունների բացության աստիճանի ավելացմամբ, արդի համաշխարհային տնտեսական համակարգում բացատրվում է այն հանգամանքով, որ անդամ երկրները ձգտում են բարձրացնել իրենց տնտեսությունների գործունեության արդյունավետությունը: Եթե երկրները ինտեգրումը դիտարկում են որպես արդյունավետ տնտեսական զարգացման և սահմանափակ արտադրական հնարավորությունների հաղթահարման ուղի, ապա փոխադարձաբար բացում են իրենց տնտեսությունները: Սակայն միայն փոխադարձ հիմնավորված և խելամիտ բացության մակարդակն է նպաստում արագ տնտեսական աճի:

Ինտեգրացիոն գործընթացների պայմաններում տնտեսության բացության ուսումնասիրությունը հնարավոր չէ առանց երրորդ երկրների հետ փոխհարաբերությունների ուսումնասիրության: Սակայն սովորական տնտեսական կապերը չի կարելի նույնացնել ինտեգրման հետ, քանի որ ցանկացած ինտեգրացիոն բլոկ ունի որոշակի տնտեսական սահման, որը «պաշտպանում» է անդամ երկրներին երրորդ երկրներից:

Այսպիսով, միջազգային տնտեսական ինտեգրումը՝ որպես տարածաշրջանային կտրվածքով տնտեսության բացության մակարդակի դրսևորում, արդի համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական առանձնահատկություններից է: Այնպիսի մեծ ինտեգրացիոն կառույցների գործունեությունը, ինչպիսիք են ԵՄ-ը, USMCA-ն, APEC-ը, MERCOSUR-ը և ԵԱՏՄ-ն, էապես ազդում են միջազգային տնտեսական գործընթացների վրա: Երկրները միավորվում են միասնական տնտեսական բլոկերում, որպեսզի լուծեն սեփական տնտեսությունների արդյունավետության բարձրացման հարցը՝ զիջելով իրենց ինքնավարության մի մասը տնտեսական կարգավորման կոլեկտիվ մարմիններին:

Ամփոփելով առաջին գլխի արդյունքները հեղինակը փաստում է, որ գոյություն ունեն ինտեգրացիոն և տնտեսության ազատականացման մի շարք

մոտեցումներ, որոնց հիման վրա կարելի է որոշել տվյալ տարածաշրջանում կամ երկրների միջև ազատ առևտրի գոտու ստեղծման նպատակահարմարությունը: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ ինտեգրացիոն խմբավորման ներսում մակրոտնտեսական գործընթացների աստիճանական ներդաշնակեցումը հանգեցնում է ոչ միայն առևտրի բացության, այլ նաև կապիտալ ներդրումների, արժութային քաղաքականության, արդյունաբերական արտադրության զարգացման և մի շարք այլ գործընթացների մերձեցման ու ազատականացման նախադրյալներ է ստեղծում:

Ատենախոսության երկրորդ՝ ***«ՀՀ տնտեսության բացությունը և արտաքին հատվածի զարգացման հիմնախնդիրները»*** գլխում կատարվել է բացությունը բնութագրող ցուցանիշների քանակական հետազոտություն: Այս համատեքստում գնահատվել է բաց տնտեսության և արտաքին առևտրի, բաց տնտեսության և օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև բաց տնտեսության և արժութաֆինանսական հարաբերությունների զարգացման միջև առկա պատճառահետևանքային կապերը, որոնք հիմնավորվել են ՀՀ տնտեսության օրինակով վերոգրյալ ցուցանիշների քանակական գնահատմամբ:

ԵԱՏՄ անդամակցության համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում անդամ երկրների տնտեսությունների բացությունը և առևտրի շարունակական ազատականացումը: Մինչ ԵԱՏՄ անդամակցությունը ՀՀ-ն բավականին ազատականացրել էր արտաքին առևտուրը: ՀՀ տնտեսության բացության և համաշխարհային առևտրում ներգրավվածության մասին են վկայում նաև արտահանման և արտաքին առևտրային քվոտաները՝ որպես արտահանման կամ արտաքին առևտրաշրջանառության հարաբերակցություն ՀՆԱ-ին:

Ինտեգրման պայմաններում տնտեսության բացության մակարդակը գնահատելու համար հեղինակը առաջարկում է ԵԱՏՄ շրջանակներում կիրառել և հաշվարկել նոր ցուցանիշ՝ փոխադարձ առևտրի քվոտա՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն միավորման ներսում փոխադարձ ներմուծման և արտահանման գումարի հարաբերակցություն ՀՆԱ-ին:

Առաջարկված ցուցանիշի միջոցով կգնահատվի ԵԱՏՄ անդամ երկրների բացությունը ինտեգրացիոն խմբավորման ներսում: Նոր ցուցանիշի հաշվարկները արտացոլված են աղյուսակ 1-ում:

Ինչպես ցույց են տալիս կատարված հաշվարկները, փոխադարձ առևտրի քվոտաները բավականին բարձր են Բելառուսի և Ղրղզստանի դեպքում, իսկ ամենացածր արժեքը գրանցվել է Ռուսաստանի դեպքում, ինչը վկայում է, որ փոխադարձ տնտեսական կապերն այնքան էլ չեն նպաստում Ռուսաստանի տնտեսական աճին:

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ առևտրի քվոտաները 2016-2020 թթ.[1]

	2016	2017	2018	2019	2020
Հայաստան	13.81	16.35	17.09	18.19	19.09
Բելառուս	56.38	61.00	61.20	57.01	51.11
Ղազախստան	10.05	10.66	11.23	11.94	11.52
Ղրղզստան	30.42	31.28	33.88	30.92	31.04
Ռուսաստան	3.23	3.37	3.51	3.54	3.58

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը մի շարք ցուցանիշներով ունի առևտրի կարգավորման բավականին ազատական ռեժիմ, այնումենայնիվ ՀՆԱ-ում առևտրի տեսակարար կշիռը կազմում է մոտ 56%: Թեև ՀՀ-ն ունի բավականին ազատական առևտրային ռեժիմ, իսկ տնտեսության բացության ցուցանիշը առանձին տարիների հասել է մինչև 60%, իսկ փոխադարձ առևտրի մասով 19%-ի, այնուամենայնիվ, ՀՀ դեռևս լիովին ինտեգրված չէ համաշխարհային առևտրին, ինչպես նաև ավելացված արժեքի ստեղծման գլոբալ շղթաներին, ինչը ենթադրում է չիրացված ներուժի առկայություն, որը ոչ միայն պայմանավորված է սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների առկայությամբ, այլև տնտեսության չափերով, պոտենցիալ առևտրային գործընկերների հետ հեռավորությամբ և մի շարք այլ գործոններով:

ԵԱՏՄ երկրների ներդրումային համագործակցությունը ինչպես անդամ երկրների, այնպես էլ Միության կայուն զարգացման նախապայմաններից է, որը բնութագրող առավել ընդհանուր ցուցանիշներից է փոխադարձ օտարերկրյա ուղղակի ներդրումները: Այս համատեքստում հեղինակը փորձում է գնահատել, թե որքանով է ԵԱՏՄ պայմանագիրը, միաժամանակ ներդրումների և առևտրի մասով, հանգեցնում երկրների միջև ավելի խորը տնտեսական ինտեգրմանը:

Այս նպատակով հետազոտվել է ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա փոխկապվածությունը: Գծային կախվածության հաշվարկման համար օգտագործվել է փոխադարձ առևտրի և փոխադարձ ներդրումների 2015-2020թթ. վիճակագրությունը: Ցուցանիշների միջև դրական կապվածության առկայությունը ցույց կտա, թե արդյոք օտարերկրյա ներդրումներն առաջացնում են որոշակի արտաքին առևտրային էֆեկտներ՝ հենվելով այն դիտարկման վրա, որ ԵԱՏՄ

[1] Կազմվել և հաշվարկվել է հեղինակի կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի http://www.eurasiancommission.org/ կայքի տվյալների հիման վրա:

փորձագիտական խմբի կողմից կատարված հետազոտության արդյունքները փաստում էին, որ Ռուսաստանի և Ղազախստանի դեպքում կուտակված փոխադարձ ներդրումների և ապրանքաշրջանառության միջև առկա է դրական ուժեղ կախվածություն (Ռուսաստան՝ 96,55, Ղազախստան 94.65), Հայաստանի դեպքում կոռելյացիոն կապը գնահատավել էր միջին, իսկ Բելառուսի և Ղրղստանի դեպքում՝ հակադարձ կախվածություն[2]: Ատենախոսությունում որպես ցուցանիշներ ընտրվել են փոխադարձ արտահանման և փոխադարձ ներդրումային հոսքերի ցուցանիշները: Կոռելյացիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ ԵԱՏՄ-ում այս երկու ցուցանիշների միջև առկա է հակադարձ կախվածություն (-0.47), իսկ առանձին երկրների կտրվածքով ստացվել են տարբեր արդյունքներ (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Պիրսոնի կոռելյացիայի գործակից

Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի և Ղրղստանի դեպքում փոխադարձ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա է հակադարձ կապվածություն, ընդ որում եթե Հայատասնի համար Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը -0.105, ապա Ղրղստանի դեպքում՝ -0.94: Բելառուսի, Ռուսաստանի և Ղազախստանի դեպքում առկա է դրական կախվածություն, ինչը կարելի է բացատրել նրանով, որ ազատ

[2] Оценка интеграционных процессов ЕАЭС в сфере торговли: 2021 [Текст] : междунар. докл. к XXII Апр. междунар. науч. конф. по проблемам развития экономики и общества, Москва, 13–30 апр. 2021 г. / М. К. Глазатова (рук. авт. кол.), Д. Н. Ахвердян, Р. Б. Тадевосян и др. ; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». — М. : Изд. дом Высшей школы экономики, 2021. — 253 с. — ISBN 978-5-7598-2514-2 (в обл.). — ISBN 978-5-7598-2274-5 (e-book), էջ 69:

առևտրի համաձայնագրերը նպաստում են շուկաների ընդլայնմանը, իսկ մեծ շուկաները, իրենց հերթին, խթանում են ՕՈՒՆ-ները:

Ատենախոսության երրորդ՝ ***«ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման կատարելագործման հիմքերը տնտեսության բացության համատեքստում»*** գլխում վերհանվել և գնահատվել են ՀՀ ԵԱՏՄ անդամակցության պայմաններում երրորդ երկրների հետ առևտրի հետագա ազատականացման հետևանքները: Հեղինակը իրականացրել է հետևանքների բազմամակարդակ վերլուծություն՝ գնահատելով այդ հետևանքները մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության վրա: Այս գլխում հեղինակը ներկայացրել է նաև ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում:

ԵԱՏՄ հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքմամբ հետաքրքրված են մի շարք երկրներ: Սա նշանակում է, որ ԵԱՏՄ ընդլայնման և նոր անդամ երկրների ներգրավման գործընթացը ավարտված չէ: Առևտրի հետագա ազատականացմամբ ստացվող արդյունքների անհավասար բնույթը ենթադրում է պոտենցիալ գործընկեր-երկրների հետ առևտրային հարաբերությունների ուսումնասիրություն, ինչը թույլ կտա ձևավորել առավել հեռանկարային գործընկերների շրջանակը, որոնց հետ ազատ առևտրային գոտու ստեղծումը ոչ միայն դրական ազդեցություն կունենա առևտրի ծավալների վրա, այլ նաև կազդի ՀՆԱ-ի, թողարկվող հիմնական արտադրատեսակների, աշխատուժի զբաղվածության վրա:

Ըստ այդմ, գնահատվել է ԵԱՏՄ հետագա ընդլայնումը՝ որպես պոտենցիալ գործընկերներ դիտարկելով Պակիստանը, Կորեան, Մալազիան: Այս համատեքստում կարևոր է ԵԱՏՄ և երրորդ երկրների հետ իրականացնել առևտրի, առկա առևտրային խոչընդոտների համակողմանի վերլուծություն, որի հիման վրա կարելի է գնահատել Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ու պոտենցիալ հնարավոր գործընկերների հետ տնտեսության ազատականացման հնարավոր հետևանքները:

Կիրառելով GTAP հավասարակշռության մոդելը՝ գնահատվել են Կորեայի, Մալազիայի և Պակիստանի հետ մաքսատուրքերի ազատականցման արդյունքում ստացվող հնարավոր արդյունքները, մասնավորապես ՀՆԱ-ի տոկոսային փոփոխությունը, ըստ մոդելի ոլորտների թողարկման ծավալների փոփոխություն (%), աշխատուժի շուկայի վրա հնարավոր ազդեցության փոփոխությունը, գործընկեր երկրից Հայաստան ներմուծման ծավալի փոփոխությունը (%), դեպի գործընկեր երկիր արտահանման ծավալի փոփոխություն (%):

Վերլուծության մեջ ներառված հեռանկարային գործընկերների հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը որոշակի ազդեցություն կունենա

ուսումնասիրված մակրոտնտեսական ցուցանիշների վրա: GTAP մոդելի կիրառմամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ առևտրի ազատականացման արդյունքում ԵԱՏՄ անդամ երկրներում տեղի կունենա ՀՆԱ-ի ծավալների հարաբերական փոփոխություն, մասնավորապես եթե Կորեայի հետ առևտրի ազատականացման դեպքում Հայաստանի և Ռուսաստանի համար տեղի կունենա ՀՆԱ-ի ծավալների հարաբերական աճ, ապա Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզտանի դեպքում անկում՝ համապատասխանաբար հետևյալ չափով. Հայաստանում՝ 0.037%, Բելառուսում՝ -0.018%, Ղրղզստանում՝ -0.030%, Ռուսաստանում՝ 0.011% (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ երկրներում ՀՆԱ-ի հարաբերական ծավալային փոփոխությունը, %

	Պակիստան	Մալազիա	Կորեա
Հայաստան	-0.000142	0.000145	0.037906
Բելառուս	0.006138	-0.000851	-0.018985
Ղազախստան	0.000096	-0.000053	-0.001822
Ղրղզստան	0.000454	-0.000591	-0.030080
Ռուսաստան	-0.000386	0.000765	0.011310

Հայաստանի համար ՀՆԱ-ի փոփոխությունը՝ արժեքային արտահայտությամբ հատկապես զգալի կլինի Կորեայի հետ առևտրի ազատականացման դեպքում: Ընդ որում, ՀՆԱ-ի բոլոր բաղադրիչները, կփոխվեն դրական ուղղությամբ: Հարկ է նշել, որ Պակիստանի և Մալազիայի դեպքում փոփոխության մեծ փոփոխություններ չեն գնահատվել:

GTAP մոդելի կիրառմամբ հաշվարկվել է նաև առևտրի ազատականացման ազդեցությունը ԵԱՏՄ անդամ երկրների ներմուծման և արտահանման վրա: Ինչպես նշվել էր, այս մոդելավորումը ենթադրում է սակագների զրոյացում գործընկեր երկրների կողմից, ինչը զգալի ազդեցություն կարող է ունենալ արտաքին առևտրաշրջանառության վրա:

Աղյուսակ 3

ԵԱՏՄ անդամ պետություններում ներմուծման ծավալի հարաբերական փոփոխությունները, % -ով (գործընկեր երկիր Պակիստան)

Ապրանք	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
վերամշակում չանցած բրինձ	140.553	141.089	140.181	140.538	140.015
բուրդ, մետաքսի բողբոջներ	68.653	68.983	68.600	68.627	68.426
գազ	138.066	138.060	138.076	138.105	138.121
Այլ տեսակի մսից արտադրանք	811.684	813.915	811.900	154.357	812.286
Կաթնամթերք	119.784	120.188	119.905	119.817	120.092
Շաքարավազ	178.290	1,123.520	178.413	178.393	178.350
Այլ կատեգորիաներում չնշված սննդի արդյունաբերության արտադրանք	74.772	45.831	47.242	35.457	67.169
Կտորեղեն	100.667	98.057	109.904	104.705	103.525
Հագուստ	105.005	107.407	103.841	111.624	107.079
Հանքային արտադրանք	73.507	30.381	64.842	59.570	69.440
Այլ մետաղներ (բացառությամբ սև մետալուրգիայի արտադրանքի)	110.123	95.707	68.684	119.740	103.193
Մետաղամշակման արտադրանք	149.125	94.141	110.068	119.643	133.201
Էլեկտրական սարքավորումներ	127.453	147.597	65.825	141.853	126.128
Տրանսպորտային մեքենա-շինության այլ արտադրանք	87.253	53.165	110.612	4.785	86.949

Աղյուսակում 3-ում ներկայացված են GTAP մոդելի հասանելի այն ճյուղերը, որոնք գրանցել են համեմատաբար մեծ աճ: Պակիստանի հետ առևտրի ազատականացման արդյունքում Հայաստանում կավելանա այլ տեսակի մսից արտադրանքի ներմուծումը 811,68%-ով, մետաղամշակման արտադրանքինը՝ 149.12%-ով, վերամշակում չանցած բրնձինը՝ 140.55%-ով, էլեկտրական սարքավորումներինը՝ 127.45%-ով, հագուստինը՝ 105%-ով, կտորեղենը՝ 100%, բանջարեղեն, մրգեր, ընկուզեղենինը՝ 24.05%-ով: Հաշվարկները ցույց են տալիս, որ Բելառուսում զգալիորեն կավելանա շաքարավազի (1123.5%), այլ տեսակի մսից արտադրանքի (813,91%), էլեկտրական սարքավորումների (147.59%) ներմուծումը: Ղազախստանի և Ռուսաստանի դեպքում այլ տեսակի մսամթերքի արտադրանքը ցուցաբերում է բարձր զգայունություն:

Հենվելով ԵԱՏՄ անդամ երկրների արդյունաբերական համագործակցության զգայուն ապրանքների ցանկի և պոտենցիալ առևտրային գործընկերներ հանդիսացող երկրների հետ առևտրի ազատականացման դեպքում ներմուծման ծավալների ուսումնասիրության հիման վրա կվերհանենք այդ երկրներից ներմուծման բարձր զգայունությամբ օժտված հիմնական ապրանքախմբերը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Զգայուն ապրանքների ցանկը (գործընկեր երկիր Պակիստան)

Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Այլ տեսակի մսից արտադրանք	Շաքարավազ	Այլ տեսակի մսից արտադրանք	Շաքարավազ	Այլ տեսակի մսից արտադրանք
Շաքարավազ	Այլ տեսակի մսից արտադրանք	Շաքարավազ	Այլ տեսակի մսից արտադրանք	Շաքարավազ
Մետաղամշակման արտադրանք	Էլեկտրական սարքավորումներ	Վերամշակում չանցած բրինձ	Էլեկտրական սարքավորումներ	Վերամշակում չանցած բրինձ
Վերամշակում չանցած բրինձ	Վերամշակում չանցած բրինձ	Խոշոր եղջերավոր կենդանիների մսից արտադրանք	Վերամշակում չանցած բրինձ	Խոշոր եղջերավոր կենդանիների մսից արտադրանք
Գազ	Խոշոր եղջերավոր կենդանիների մսից արտադրանք	Գազ	Խոշոր եղջերավոր կենդանիների մսից արտադրանք	Գազ
Էլեկտրական սարքավորումներ	Գազ	Կաթնամթերք	Գազ	Մետաղամշակման արտադրանք
Կաթնամթերք	Կաթնամթերք	Տրանսպորտային մեքենաշինության այլ արտադրանք	Կաթնամթերք	Էլեկտրական սարքավորումներ
Այլ մետաղներ (բացառությամբ սև մետալուրգիայի արտադրանքի)	Հագուստ	Մետաղամշակման արտադրանք	Այլ մետաղներ (բացառությամբ սև մետալուրգիայի արտադրանքի)	Կաթնամթերք
Հագուստ	Կտորեղեն	Կտորեղեն	Մետաղամշակման արտադրանք	Հագուստ

Ինչպես ցույց տվեց կատարված վերլուծությունը, երրորդ երկրների հետ առևտրի ազատականացումը ևս միանշանակ չէ, և կարող է տարաբնույթ ազդեցություն ունենալ թե՛ երկրի ՀՆԱ-ի, թե՛ զբաղվածության, թե՛ ներմուծման և

արտահանման կառուցվածքի և ծավալների, ինչպես նաև մի շարք այլ գործոնների վրա:

Այս համատեքստում տնտեսության հետագա ազատականացումը պետք է հենվի նմանատիպ համակողմանի գնահատականների, զգայուն ճյուղերի և ապրանքների դուրս բերման վրա: Նմանատիպ գնահատականները թույլ կտան գնահատել հետագա ազատականացման հնարավորությունները և սպառնալիքները:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ատենախոսության շրջանակներում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

• Կարգավորման գործող բազմակողմանի կանոններին փոխարինելու են գալիս առևտրի, ծառայությունների, ներդրումների և արտադրության այլ գործոնների շարժի կարգավորման տարածաշրջանային բնույթի կանոններ, որոնք մի կողմից ազատականացնում, մյուս կողմից երրորդ երկրների հետ հարաբերականորեն «սահմանափակում են» առևտրի պայմանները:

• ՀՀ-ԵԱՏՄ փոխադարձ առևտրային և ներդրումային հոսքերի վերլուծությունը բացահայտում է լրացուցիչ ներուժի իրացման հնարավորություն և որոշակի խնդիրների առկայություն: Զարգացման հնարավորությունները և ներուժը պայմանավորված են տնտեսությունների փոխլրացման բարձր աստիճանով, իսկ խնդիրները՝ շուկայական հարաբերություններում անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի ներգրավվածության տարբեր աստիճաններով, դրանց չափերով, զարգացման մակարդակներով և այլն:

• ՀՀ տնտեսության զարգացման վեկտորը բնորոշվում է ներքին շուկայի մրցունակության ցածր մակարդակով և տնտեսական աճի ցածր որակով, ինչի արդյունքում ինտեգրացիոն ձգողականության մասշտաբները և դաշտերը փոխվում են, ինչը պահանջում է անդամ երկրների հետ փոխգործակցության նոր ուղիների որոնման անհրաժեշտություն:

• Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵԱՏՄ առևտրի ազատականացման միջոցառումները նպաստել են անդամ երկրների տնտեսական փոխգործակցության խորացմանը, ընդ որում, թեև առևտրային փոխգործակցության քանակական ցուցանիշները ունեն դրական դինամիկա, սակայն որակական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են մասնագիտացման և կոոպերացման խորացումը, չեն զարգացել:

• Համակարգային բնույթի ռիսկերի և գործոնների ամբողջությունը խոչընդոտում է տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում արտադրական արդյունավետ մերձեցման, կոոպերացման զարգացմանը:

• ԵԱՏՄ հետագա ընդլայնման և պոտենցիալ գործընկերների ընտրության տեսանկյունից պետք է համակողմանի վերլուծել ԵԱՏՄ անդամ և պոտենցիալ

երկրների առևտրի ծավալները և կառուցվածքը, գործող առևտրային խոչընդոտները, արտահանման ներուժը:

• Մի շարք երկրների հետ առևտրի հետագա ազատականացումը կարող է հանգեցնել տեղական արտադրողների մրցունակության անկման, ուստի, դրանց հետ առևտրի համաձայնագրերի կնքման փոխարեն առաջարկվում է առևտրա-տնտեսական համագործակցության համաձայնագրերի կնքում, իսկ կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորումը անհրաժեշտ է նախատեսել երկարաժամկետ հեռանկարում: Միևնույն ժամանակ, պետք է ակտիվացնել համագործակցությունը ոչ միայն ավանդական արտահանման-ներմուծման գործարքների մասով, այլ անհրաժեշտ է խթանել ներդրումները, նախապատվություն տալ թվային լուծումներին և նոր տեխնոլոգիաներին:

• ԵԱՏՄ անդամ երկրները, ձգտելով փոխադարձ բացության առևտրի և ներդրումների ոլորտում, դեռևս հապաղում են ֆինանսական փոխգործակցության հարցերում: Միևնույն ժամանակ, փոխադարձ առևտրի և ներդրումների սպասարկման համար արժութային ռիսկերից խուսափումը չի հիմնավորում այդպիսի փոխգործակցության անհրաժեշտությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սնգրյան Ս., Առևտրի բացությունը և Հայաստանը: //«ԲԱՆԲԵՐ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդես, թիվ 2(58), 2020թ., էջ 101-115: https://asue.am/upload/files/science/banber/2020-year-2/7.pdf
2. Սնգրյան Ս., Տնտեսական բացության ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա: //Այլընտրանք գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր 2021, էջ 57-66 http://alternative.am/wp-content/uploads/2021/12/December-2021.pdf
3. Sngryan, S. (2022). ASSESSING THE EFFECTS OF TRADE LIBERALIZATION WITH THIRD COUNTRIES: THE CASE OF THE EURASIAN ECONOMIC UNION. *Journal of Liberty and International Affairs*, *8*(2), 35-46. https://doi.org/10.47305/JLIA2282035s
4. Sngryan, S., THE CONTRADICTIONS OF CURRENCY INTEGRATION IN EEU. //«ԲԱՆԲԵՐ, ՀՊՏՀ, 2022 N5 https://asue.am/upload/files/science/banber/2022-year-5/7.pdf

СИМОН БАГДАСАРОВИЧ СНГРЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И ТЕНДЕНЦИИ ОТКРЫТИЯ ЭКОНОМИКИ РА В УСЛОВИЯХ МЕЖДУНАРОДНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06: «Международная экономика». Защита диссертации состоится в 6 июня 2023г., в 14^{00}, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Глобализация всемирной экономики и либерализация мирового хозяйства происходят параллельно с процессами экономической интеграции в отдельных регионах. Процессы открытости и либерализации экономик сопровождаются ростом взаимодействия между развивающимися странами, при этом меняются как количественные, так и качественные показатели взаимозависимости и взаимодействия.

Экономика РА находится под сильным влиянием происходящих процессов, формируя открытую экономику и подвергаясь внешним и внутренним колебаниям, становясь при этом более динамичной, трансформирующейся и «чувствительной». Различные процессы, происходящие в мировой экономике, доказывают необходимость рациональной открытости национальных экономик.

Цель и задачи исследования:

Основной целью исследования является поиск путей решения проблем открытости экономики РА в условиях международной экономической интеграции. Для достижения поставленной цели были предложены и решены следующие задачи:

- изучить основные характеристики концепции экономической открытости в профессиональной литературе,
- рассматривать экономическую интеграцию как инструмент обеспечения открытости экономики и экономической эффективности,
- обсудить существующие подходы влияния открытой экономики на повышение эффективности международной торговли,
- анализировать уровень открытости экономики РА, тенденции и особенности развития,
- оценить корреляцию между открытостью экономики РА и объемом внешней торговли,
- выявить возможные связи между экономической открытостью РА и привлечением иностранных инвестиций,

- обсудить роль экономической открытости РА в улучшении валютно-финансовых отношений,
- оценить последствия дальнейшей либерализации торговли с помощью инструментов эконометрического моделирования,
- выявить проблемы и перспективы экономического сотрудничества РА в контексте расширения сотрудничества с ЕС и членства в ЕАЭС.

Научная новизна исследования.

На основе исследования, проведенного в рамках диссертации, был получен ряд теоретических, методологических и практических результатов, среди которых основными положениями, отражающими научную инновационность, являются:

- В рамках международной экономической интеграции для оценки открытости торговли был разработан и рассчитан новый показатель: квота взаимной торговли, как отношение объема взаимного импорта и экспорта в рамках региональной интеграционной единицы к ВВП.
- Моделирование GTAP использовалось для оценки влияния либерализации торговли с третьими странами на показатели макроэкономического развития государств-членов ЕАЭС, включая Армению, путем расчета возможного изменения объемов ВВП, выпуска, экспорта и импорта, а также показателей занятости.
- В случае изменения условий торговли со странами, включенными в модель GTAP, в частности либерализации торговли (Пакистан, Малайзия, Корея), выявлены чувствительные к ввозу в ЕАЭС товары.
- В результате либерализации торговли, сопровождающей дальнейшее открытие экономики в рамках интеграционной группировки ЕАЭС, рассчитано относительное изменение объема импорта в государствах-членах ЕАЭС с потенциальными торговыми партнерами (Пакистан, Малайзия, Корея), на основе которых были составлены матрицы товарных групп, обладающих высокой чувствительностью к импорту из этих стран.
- Выявлено, что ожидаемый прирост экспорта в случае либерализации торговли с потенциальными торговыми странами-партнерами не соответствует специализации страны, в то же время экспортный потенциал продукции, соответствующей специализации, оценивался на основе объемов торговли между этими странами.
- На основе линейной зависимости между взаимными торгово-инвестиционными потоками и эластичностью инвестиций была дана оценка наличия сильной связи между инвестиционными потоками ЕАЭС и объемами взаимной торговли.

SIMON BAGHDASAR SNGRYAN

TRENDS AND ISSUES OF THE RA ECONOMY OPENNESS IN THE CONDITIONS OF INTERNATIONAL ECONOMIC INTEGRATION

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the speciality 08.00.06 - "International Economics".

The defense of the thesis will take place on June 6th, 2023 at 14^{00} o'clock, at 014 Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics: 128 Nalbandyan Str., Yerevan 0025, RA.

ABSTRACT

The processes of globalization and economic liberalization of the global economy take place in line with the processes of economic integration in distinct regions. The processes of openness and liberalization of economies are accompanied by the growth of interaction between developing countries, and both the quantitative and qualitative indicators of interdependence and interaction are changing. The RA economy is heavily influenced by the ongoing processes, shaping an open economy and being subject to external and internal fluctuations, concurrently becoming more dynamic, transforming and "sensitive". The diverse processes taking place in the global economy prove the need for rational openness of national economies.

The aims and objectives of the research

The main goal of the thesis is to identify ways to solve the issues of openness of the RA economy in the context of international economic integration. In order to achieve the above-mentioned aim, the following objectives were set forth:

- to study the main characteristics of the concept of economic openness in the professional literature,
- to consider economic integration as a tool for ensuring the openness of the economy and economic efficiency,
- to discuss the current approaches to the impact of the open economy on increasing the efficiency of international trade,
- to analyze the level of openness, trends and development characteristics of the RA economy,
- to evaluate the correlation between the openness of the RA economy and the turnover of foreign trade,
- to identify the possible links between the RA economic openness and the attraction of foreign investments,

- to discuss the role of the RA economic openness in improving monetary and financial relations,
- to assess the consequences of further liberalization of trade via econometric modeling toolkit,
- to identify the issues and perspectives of the RA economic cooperation in the context of the expansion of cooperation with the EU and EAEU membership.

The scientific novelty of the thesis

On the basis of the research carried out within the framework of the thesis, a number of theoretical, methodological and practical results were obtained, and the following provisions reflecting the scientific novelty are as follows:

- To assess trade openness within the framework of international economic integration, a new index - the mutual trade quota as the ratio of the sum of imports and exports within the regional integration unit to the GDP was developed and calculated.
- By means of GTAP modeling the impact of trade liberalization with third countries on macroeconomic development indicators of EAEU member states including Armenia was estimated, by calculating the possible change in GDP, output, export and import volumes, as well as employment indicators.
- In case of trade condition changes with the countries included in the GTAP model, particularly in case of trade liberalization (Pakistan, Malaysia, Korea), products sensitive to imports to the EAEU were identified.
- As a result of trade liberalization accompanying the further opening of the economy within the framework of the EAEU integration, the relative change in the volume of imports in the EAEU member states with potential trade partners (Pakistan, Malaysia, Korea) was calculated, based on which the matrices of product groups of high sensitivity to imports from those countries were compiled.
- It was estimated that the anticipated increase in exports in case of liberalization of trade with potential trade partner countries does not correspond to the specialization of the country. At the same time, the export potential of products related to specialization was estimated based on the volume of trade between these countries.
- Based on the linear dependence between mutual trade and investment flows and investment elasticity, it was estimated that there is a strong connection between EAEU investment flows and mutual trade turnover.